

Բայց ես, միտքս գրած չեմ այդպիսի երազութեան մը փորձը փորձել, և նաև եթէ գիշերները կարենամ ծառի մը կամ դիպուածական բարձրաւանդակ տեղւոյ մը կռուիլ՝ զանց պիտոր չընեմ։ Միւս կողմանէ հետերնիս երկու ամ սուան պաշար կը տանինք, մեր ճար պիկ որսորդն ալ վար որ իջնանք՝ արգելք պիտոր չգտնայ մեզի առատ որս հոգալու։

— Է՛հ, պարոն ֆէննըտի, ինչ վար պետ հարուածներ պիտի կշռես, կանչեց երիտասարդ ենթտեղակալ մը, նախանձու աչքերով Սկովտիացիին նայելով։

— Առանց հաշուի առնելու նաև այն, ըսաւ ուրիշ մը, որ մեծ փառքով մը զուարճութիւնդ կրկնապատկի պիտոր։

— Պարոնայք, պատասխանեց որսորդը... շատ չնորհակալ եմ... ձեր ինծի ըրած մեծարանաց... սակայն չեմ կըրնար զանոնք ընդունիլ...

— Հէյ, կանչեցին ամենը, չերթա՞ս պիտոր դու ալ։

— Պիտոր չերթամ։

— Տղքդոր Ֆէրկըսընի չընկերանա՞ս պիտոր։

— Ոչ թէ միայն չընկերանամ պիտոր իրեն, այլ և եթէ հոս կը գտնուիմ՝ անոր համար է որ մինչև ետքի վայրկեան ջանամ զինքը երթալէն արզիլելու։

Ամենուն աչքը դէպ 'ի տղքդոր դարձան։

— Իրեն մօտիկ մ'ընէք, ըսաւ իր սովորական հանգարտ կերպովը։ Ատոր վրայ հետը վիճելու չէ. վասն զի իրապէս զիտէ որ հետս պիտոր գայ։

— Ս. Պատրիկ վկայ, կանչեց ֆէննըտի, կ'երդնում...

— Բանի մը վրայ մ'երդնուր, բարեկամ Տիք, դու չափուած կշռուած ես, դուն ալ, վառօդդ ալ, հրացաններդ ալ ու նաև զնտակներդ. ուստի ալ ասոր վրայ չխօսինք։

Եւ յիշաւի այն օրէն սկսեալ մինչև որ Զանգիպար հասան, Տիք մէյ մըն ալ բերանը չբացաւ. ալ ոչ ասոր վրայ խօսք ըրաւ և ոչ ուրիշ բանի վրայ. բոլորովին լռեց։

Կը շարունակուի։

Ս.ՄԱՐՍԱՏՈՒՆ ԼԻԻԱՅ


ՄԵՐՁ Ի ՀՌՈՎՄ

Հռովմայ դռներէն մէկէն դուրս՝ որ Դուռն ժողովրդեան կը կոչուի, Տիքեր գետին վրայ Մոլլէ անուամբ կամուրջ մը ձգուած է, որուն հիմունքը Մարկոս Եմիլիոս Սկաւրոս ձգած է Հռովմայ շինութենէն 700 տարի ետքը, անունը կամուրջ Միլիթոյի դնելով։ Կամուրջը անցնելով և յաջ դառնալով և փլամինիա ըսուած ճամբէն անցնելով այցելուն շուտ մը այն տեղը կը հասնի ուր Կոստանդիանոսի ընդ Մաքսենտոսի հռչակաւոր պատերազմն եղաւ։ Հոն ընդառաջ կ'ելլայ անոր վալէա անուամբ գետակ մը, որ Գրեմոր գետին նախասկիզբն է, պատմական մեծ յիշատակ, որուն գետափանց վրայ մեռան 300 փարիսեանք քաջութեամբ պատերազմելով Ետրուրացւոց դէմ, Հռովմայ հիմնարկութենէն 275 տարի վերջը և ֆրիստոսէ 477 տարի առաջ։ — Հոն այցելուին աջակողմը դեղնագոյնն Տիքեր կը հոսէ, և ձախակողմը քանի մը ժայռեր կ'ամբառնան՝ որ իրենց գունոցը համար հիններէն կարմիր ժայռք կ'անուանէին. իսկ գետոյն հանդէպ Սարինեան լեռները կը բարձրանան։

Ճամբուն այն տեղը ուր մընաչափ քարը Հռովմէն եօթը մըն հեռաւորութիւն կը նշանակէ, ճամբան երկու կը բաժնուի, մէկը դէպ 'ի ձախ՝ որ 'ի Դոսգանա կը տանի, ժայռերուն քովէն անցնելով, իսկ միւս աջակողմեանը Տիքերեան ճամբուն հետ կ'երթայ կը միանայ։ Այս երկու ճամբաներուս մէջ բարձրութիւն մը կայ՝ որ Տիքերի վրայ կը նայի և որուն ստորոտը ցան ու ցիր տուններ կը տեսնուին։ Այս տեղւոյս անունն է Առաջին Դուռն։

Այս բլրոյս վրայ նոր ճարտարապետութեամբ շինուած տուններ ալ կան. կը տեսնուին դարձեալ մանաւանդ ձախակողմը՝ հին նախնի շէնքերու հիմունքներ, արդ փլայատակք, բայց կ'իմացուի որ մեծակառոյց և հրաշակերտ





չէնքեր եղած պիտի ըլլան: Հոն էր նաև Օգոստոս կայսեր կնկան Լիւիայի ամա-
րաստունը:

Այն բարձրութենէն մարդուս աչքը
չորս դին գեղեցիկ տեսարանաց շարքը
կը դիտէ. մէկ կողմանէ Ետրուրական
բլուրները և Սորակտէն կը տեսնայ, որ
ժեռուտ և միայնիկ իբրև ծովու մէջ
կղզի մը՝ անանկ հորիզոնէն վեր կ'ամ-
բառնայ. յետոյ բոլոր շրջակայ չքնաղ
և երփնազարդ տեսարանը իր ապշու-
թիւնը կը գրաւէ, Սաբինեան լեռնե-
րը, Ալպանոյ լեռը կը տեսնայ, և Տիբեր
գետին ուղղութիւնը բռնելով մինչև
Հռովմայ շրջակայ դաշտաց վրայ տեսու-
թիւնը կը պտըտցնէ բազում և վայելչա-
գեղ հրաշալեաց ականատես ըլլալով,
զորոնք գրչով նկարելը անկարելի է,
թերևս վրձինը կարենայ ոգորիչ բնու-
թեան կերպարանքը գողնալու: 1863,
ապրիլ 24ին նոյն տեղերս փորելով՝ Օ-
գոստոսի մէկ արձանը գտնուեցաւ, որ
մինչև օրերս գտնուած և պահուած ար-
ձանաց առաջին գեղեցիկներէն կը հա-
մարուի, և արդ վատիկանի զարդերէն
մէկն է: Անկէ քիչ հեռու սենեակներ
գտնուեցան գունագեղ նկարուք զար-
դարեալ, որոնց զովութեան մէջ Լիւիա
ամառուան տաքերը կը մեղմէր: Մեր
հոս ընծայած տեսարանը նկարեալ պա-
տի մը կէսը կը ներկայացնէ՝ որ կրնայ
պղտի գաղափար մը տալ ան ատենուան
սովոր եղած զարդերուն, որ էին գիւ-
ղից և պարտիզաց տեսարաններ:

ՄԷՆՉԸՍԴԵՐ ԵՒ ԼԻՎԸՐԲՈՒՆ

Հաղլինկտըն, Ռոչտէլ, Պիւրի, Պու-
դըն, Օլտհէմ, Աշդըն-Ֆրոս, Սգէլի-
Պրիճ, այս ամենայն քաղաքներս՝ յա-
րակիցը կամ արուարձանը են Մէնչըս-
դըր մեծ քաղաքին, որ է թագուհի
Միացեալ թագաւորութեան (Անգղիոյ)
ճարտարարուեստից, և հաւանաբար բո-

լոր աշխարհիս: Ըրքի և Մէտլոյի գե-
տախառնունքի քով, Այրուէլ գետոյն
վրայ կանգնուած է, և ունի 310,000
բնակիչ: Անցեալ դարուն մէջ 20,000էն
աւելի չունէր, և 1800ն՝ 80,000 միայն:
Բամբակեայ հիւսուածոց գործարանաց
կեդրոնն է, որոնք 5000 շոգեշարժ մե-
քենայ և 30,000 հիւսելու գործիք ու-
նին, որոնցմէ 6,000ը շոգիով կը շարժին:
Անգղիոյ մէջ պատրաստուած բամբա-
կին հինգին չորսը ինքը կը հայթհայ-
թէ, մուսլին, բամբակախառն կտաւ,
տեսակ տեսակ լաթեր (percale, piqué)
թաւիշ և ուրիշ կերպաններ, որոնք մի-
ջին հաշուով չորս միլիոն մեղրական
կենդինար բամբակ կը գործածեն: Նմա-
նապէս մետաքսեղէն, բրդեղէն կտաւ-
ներ, օթոցներ, գլխարկներ, քիմիական
արգասիքներ, մեքենաներ կը շինեն հոն.
և քաղաքը ձուլարաններով, թափիչ-
ներու արուեստանոցներով, գրոց տպա-
րաններով և հալոցներով պատուած է:
Իր յաջողութեանը պատճառ եղած են
Հարկրէյվը, Արքրայդ, Գրեմփոլըն, ի-
րենց տուած հիւսուածոյը կատարե-
լագործութեամբ. բայց պարտական է
նաև իր նշանաւոր դրիցը, որ բալմա-
թիւ ճանապարհաց միութեան կէտին
վրայ կ'ինկնայ, ինչպէս են Լիվըրբուլի,
Լիտտի, երկաթուղիներն և ուրիշ չորս
նման ճամբաներ. յետոյ Այրուէլ և Մըր-
զէյ գետերու, որոնք Լիվըրբուլը Մէնչըս-
դըրի նաւահանգիստ կ'ընեն, յետոյ
Պրիճ-Վոդըրի ջրանցքին որ ընդ մէջ
Մէնչըսդըրի և Աշդընի, Պոլդընի և Պիւ-
րիի ջրանցից, Ռոչտէլի մէջ. այնպէս որ
այս ճամբաներով կամ անոնց մօտ ե-
ղածներով Անգղիոյ մէջ չկայ կարևոր
տեղ մը որ Մէնչըսդըրի հետ հաղորդած
չըլլայ ջրով: Անտոնինեան ճանապար-
հագրութեան մէջ Մանկունիոն կոչուած
հռովմական կայարանի մը տեղը բռնած
է Մէնչըսդըր. վայելուչ շինուած է. նոր
թաղերը աւելի կարգաւորեալ են. ո-
րոնց մէջ աւելի ընտիրներն են իրենց
շինուածքներովը Բորդլենդ-Բլէյս և Մո-
զլի-սգրիդ. 17 եկեղեցի ունի. Գրիս-
տոսի ըստուած եկեղեցին գլխացի գեղե-